Social Security

# Ինչպես Աշխատանքը Ազդում է Ձեր Նպաստներին

2006թ.

www.socialsecurity.gov

# Ինչպես Աշխատանքը Ազդում է Ձեր Նպաստներին

Դուք կարող եք ստանալ ծերության կենսաթոշակ կամ վերապրողի նպաստներ Սոցիալական Ապահովության Վարչությունից եւ միեւնույն ժամանակ աշխատել: Սակայն, ըստ օրենքի, ձեր նպաստները կարող են կրճատվել եթե դուք որոշակի գումարից ավել եք վաստակում: Սույն թերթիկում բացատրվում է թե ինչն է համարվում «հասույթ» եւ ինչպես կարող եք տեղեկացնել Սոցիալական Ապահովության երբ վերադառնաք աշխատանքի: Այստեղ նաեւ բացատրվում է մի հատուկ կանոն, որը սովորաբար վերաբերում է ձեզ Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու առաջին տարվա ընթացքում:

***ԾԱՆՈՒՑՈՒՄ.*** *Կան տարբեր եւ յատուկ կանոններ Սոցիալական Ապահովության հաշմանդամության եւ Լրացուցիչ Սոցիալական Եկամուտի («SSI») վճարումներ ստացող մարդկանց համար: Այդ նպաստառուները պետք է նրանց լրիվ հասույթը յայտնեն Սոցիալական Ապահովության: Միեւնույն ժամանակ, տարբեր կանոններ կան Միացյալ Նահանգներից դուրս կատարված աշխատանքի նկատմամբ: Դիմե՛ք Սոցիալական Ապահովության, եթե դուք աշխատում եք (կամ նախատեսում եք աշխատել) երկրից դուրս:*

## Դուք որքա՞ն կարող եք վաստակել եւ տակաւին ստանալ նպաստներ

**Եթե ծնվել եք Յունուար 2, 1941-ից մինչեւ Յունուար 1, 1942,** ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքն է 65 տարի եւ 8 ամիս: Եթե դուք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքն եք կամ ավելի տարեց, դուք կարող եք ունենալ անսահման վաստակում եւ միեւնոյն ժամանակ ստանալ ձեր լրիվ նպաստները: Եթե դուք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եք, հասույթի սահմաններ կան ձեզ համար: Ձեր նպաստները կը կրճատվեն եթե ձեր հասույթը գերազանցի այս սահմանները: Եթե դուք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եք ամբողջ 2006 թվականի ընթացքում, իւրաքանչիւր 2 դոլարի փոխարեն մենք ձեր նպաստներից կը պահենք 1 դոլար երբ ձեր հասույթը անցնի 12,480 դոլարի սահմանը:

**Եթե դուք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը հասնեք 2006 թվականի ընթացքում,** իւրաքանչիւր 3 դոլարի փոխարեն մենք ձեր նպաստներից կը պահենք 1 դոլար երբ ձեր հասույթը անցնի 33,240 դոլարի սահմանը: Այս դադրում է այն ամսուն երբ դուք հասնում եք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը:

## Այս օրինակները ցույց են տալիս, թե այս կանոնները ինչպես ազդում են ձեզ՝

Ենթադրենք որ դուք սկսում եք ստանալ Սոցիալական Ապահովության նպաստներ 62 տարեկանում՝ Յունուար 2006 թվին, եւ ձեր ամսական նպաստի գումարն է 600 դոլար (տարեկան 7,200 դոլար): Տարվա ընթացքում դուք աշխատում եւ ստանում եք 20,480 դոլար (12,480 դոլարի սահմանային չափից 8,000 դոլար ավելի): Ձեր Սոցիալական Ապահովության նպաստներից կը պահենք 4,000 դոլար (1 դոլար իւրաքանչիւր 2 դոլարից փուխարեն երբ արտօնված սահմանից ավել շահեք), սակայն դուք տակաւին կստանաք 3,200 դոլար ծերության կենսաթոշակ:

Կամ էլ ենթադրենք որ տարվա սկզբին լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ էիք, բայց հասնելու եք այդ տարիքը Սեպտեմբեր 2006 թվին: Նաեւ ենթադրենք որ Յունուարից մինչեւ Օգոստոս (ութը ամսվա ընթացքում) դուք վաստակել եք 34,440 դոլար: Այն ժամանակաշրջանիհամար կը պահենք 400 դոլար (1 դոլար 33,240 դոլարից ավել վաստակած իւրաքանչիւր 3 դոլարի համար): Դուք տակաւին կստանաք ձեր Սոցիալական Ապահովության նպաստների 4,400 դոլարը: Իսկ Սեպտեմբերից սկսյալ (երբ կը հասնեք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը) դուք կստանաք ձեր լրիվ նպաստները անկախ ձեր վաստակած գումարից:

## Ձեր հասույթը եւ ձեր նպաստները՝ որքան դուք ստանալու եք

Հետեւյալ աղյուսակը գաղափար է տալիս ձեզ թէ որքան նպաստ կարող եք ստանալ 2006 թվականում ձեր ամսական նպաստների եւ հասույթի արժէքների համեմատ.

| Ամբողջ տարվա ընթացքում լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եղող մարդկանց համար | | |
|---|---|---|
| *Եթե ձեր ամսական Սոցիալական Ապահովության նպաստն է* | *Իսկ դուք վաստակում եք* | *ձեր տարեկան նպաստը կը լինի* |
| 700 դոլար | 12,480 դոլար կամ նվազ | 8,400 դոլար |
| 700 դոլար | 15,000 դոլար | 7,140 դոլար |
| 700 դոլար | 20,000 դոլար | 4,640 դոլար |
| 900 դոլար | 12,480 դոլար կամ նվազ | 10,800 դոլար |
| 900 դոլար | 15,000 դոլար | 9,540 դոլար |
| 900 դոլար | 20,000 դոլար | 7,040 դոլար |
| 1,100 դոլար | 12,480 դոլար կամ նվազ | 13,200 դոլար |
| 1,100 դոլար | 15,000 դոլար | 11,940 դոլար |
| 1,100 դոլար | 20,000 դոլար | 9,440 դոլար |

## Ո՞ր եկամուտն է հաշվի առնվում... եւ մենք ե՞րբ ենք այն հաշվի առնում

Եթե դուք աշխատում եք ուրիշի համար միայն ձեր աշխատավարձն է հաշվի առնվում Սոցիալական Ապահովության հասույթի սահմանային չափի նկատմամբ: Եթե դուք ինքնաշխատ եք, մենք միայն հաշվի ենք առնում ինքնաշխատությունից առաջացած ձեր զուտ հասույթը: Մենք հաշվի չենք առնում այլ եկամուտներ, օրինակ՝ կառավարական նպաստներ, ներդրումներից առաջ եկած եկամուտ, տոկոս, հանգստաթոշակ, տարեվճար եւ դրամատիրության եկամուտ:

Եթե դուք աշխատում եք աշխատավարձով, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն վաստակելու պահում եւ ոչ վճարման ժամանակ: Եթե դուք ստանաք եկամուտ այս տարի այն աշխատանքի համար որ կատարել էիք անցյալ տարում, այս եկամուտը իբր հասույթ չհաշվվում այս տարվա համար: Օրինակներ են հաւաքված հիվանդության կամ արձակուրդի վարձատրություններ եւ պարգեւաբաշխումներ:

Եթե դուք ինքնաշխատ եք, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն ստանալու (վճարվելու) պահում եւ ոչ այն վաստակելու ժամանակ, բացի այդ դէպքում երբ վճարվում եք Սոցիալական Ապահովության կենսաթոշակի իրավասու լինելուց ետք, այն աշխատանքի համար որ կատարած էիք նախքան կենսաթոշակի իրավասու լինելը:

(շրջել)

## Հատուկ կանոններ կենսաթոշակի անցնելու ձեր առաջին տարվա համար

Երբեմն տարվա կեսին կենսաթոշակի անցնող որոշ մարդիկ արդեն իսկ վաստակած կլինեն հասույթի տարեկան սահմանափակվելի: Այդ պատճառով գոյություն ունեն հատուկ կանոններ, որոնք ի զօրու են մեկ տարվա հասույթի նկատմամբ՝ սովորաբար կենսաթոշակի անցնելու առաջին տարում: Այդ կանոնների հետեւանքով դուք կարող եք ստանալ Սոցիալական Ապահովության նպաստ իւրաքանչիւր ամսվա համար որ դուք ամբողջությամբ կենսաթոշակի անցածւ եք՝ անկախ ձեր տարեկան հասույթից:

2006 թվականի համար լրիվ կենսաթոշակային տարիքը չլրացած անձ մը համարվում է կենսաթոշակառու, եթե իր ամսական հասույթը 1,040 դոլար է կամ ավելի նվազ: Օրինակ, Ճոն Սմիթ կենսաթոշակի է անցնում 62 տարեկանում Հոկտեմբեր 30, 2006 թվականին: Մինչեւ Հոկտեմբեր ամիսը նա վաստակելու է 45,000 դոլար: Նոյեմբեր ամսուն նա սկսելու է նոր աշխատանք ուր պիտի վաստակի ամսական 500 դոլար: Հակառակ որ իր տարեկան հասույթը արդէն գերազանցում է Սոցիալական Ապահուության սահմանը (12,480 դոլար), նա ստանալու է Նոյեմբերի եւ Դեկտեմբերի նպաստները, որովհետեւ այդ երկու ամիսներու ընթացքում իր ամսական հասույթը 1,040 դոլարից պակաս պիտի լինի: Սա պատահում է «կենսաթոշակի առաջին տարվա եկամուտի» սահմանափակման կանոնի պատճառով, այն անհատների համար որոնք լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը չեն հասել: Եթե Պր. Սմիթի հասույթը

գերազանցի 1040 դոլար Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներին, նա նպաստներ չստանում այդ ամիսներու համար:

2007 թվականից սկսյալ, Սոցիալական Ապահովության հասույթի սահմանային չափերը ի զօրու կլինեն նրա համար որովհետեւ նա կլինի կենսաթոշակի անցնելու առաջին տարուց դուրս:

Եթե դուք ինքնաշխատ եք, մենք նաեւ հաշվի առնում ենք ձեր մասնակցության մակարդակը ձեր սեփական գործակալության մէջ որոշելու թե արդյոք դուք կենսաթոշակառու եք: Մենք ուսումնասիրում ենք ձեր աշխատանքի ժամերը: Ընդհանուր առմամբ, եթե դուք աշխատում եք ամսական 45 ժամից ավելի, մենք ձեզ կենսաթոշակառու չենք նկատում: Կենսաթոշակառու եք եթէ աշխատում եք 15 ժամից նվազ: Իսկ եթե դուք աշխատում եք ամսական 15-ից մինչեւ 45 ժամ այնպիսի աշխատանքով որը պահանջում է շատ հմտություններ կամ էլ կառավարում եք մի մեծ գործակալություն, դուք կենսաթոշակառու չեք համարվի:

## Ձեր հասույթուի փոփոխությունները մեզ տեղեկացրեք

Մենք որոշում ենք ձեր 2006 թվականի Սոցիալական Ապահովության նպաստների գումարը ձեր տրամադրած հասույթի տեղեկության համեմատ: Անմիջապես մեզ տեղեկացրեք եթե դուք կարծում եք որ ձեր 2006 թվականի հասույթը տարբերվում է նախապես մեզ ներկայացված գումարից:

Եթե ձեր աշխատանքի հիման վրա ընտանիքի այլ անդամներ ստանում են նպաստներ, ձեր հասույթը, որ դուք ստանում եք կենսաթոշակի անցնելուց ետք, կարող է կրճատել նաեւ նրանց նպաստները: Սակայն,

նոյն ընտանիքի անդամների հասույթը ազդում է միայն նրանց նպաստներին:

Մեզ դիմեք եթե հարցեր ունեք ձեր հասույթը հաշվարկելու նկատմամբ: Խնդրում ենք որ երբ զանգահարեք ձեզ մոտ ունենաք ձեր Սոցիալական Ապահովության համարը:

## Արդյո՞ք ձեր աւելորդ հասույթը կբարձրացնի ձեր նպաստները

Ձեր սկզբնական Սոցիալական Ապահովության նպաստը հիմնված կլինի ձեր հասույթի ամենաբարձր տարիների վրա: Սակայն ամեն տարի մենք ուսումնասիրում ենք բոլոր այն Սոցիալական Ապահովության նպաստառուների տվյալները, որոնք աշխատում են: Եթե ձեր հասույթի վերջին տարին ձեր ամենաբարձր տարիներից մեկը լինի, ապա մենք վերահաշվում ենք ձեր նպաստները եւ վճարում ենք ձեզ ավելացումները: Սա ինքնաբերաբար կատարվում է եւ սովորաբար ավարտվում է մինչեւ յաջորդ տարվա Հոկտեմբեր ամիսը: Օրինակ, եթե ձեր 2005 թվականի հասույթը բարձրացնելու է ձեր նպաստը, դուք կստանաք այդ մինչեւ Հոկտեմբեր 2006 թվականը: Այդ ավելացումը հետադարձ տրվում է Յունուար 2006 թվականից:

## Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող

ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտեան ժամը 7-ից մինչեւ երեկոյեան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայութեամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկութիւններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայութիւնը կարող եք գտնել մեր գրասենեակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցեք մեզ հետեւեալ թվին **1-800-772-1213** եւ ճնշեք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենեակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

**Social Security Administration**
SSA Publication No. 05-10069-AM
How Work Affects Your Benefits (Armenian)
January 2006